

Արփենի

Վարչական ղեկավար՝ Առաքելյան Վահագն

Հեռ 094-92-74-18
094-92-73-12

Մակերես՝ 19.8կմ²

Բնակչություն՝ 351

arpeni.shirak@mta.gov.am

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 55կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Փալըթլի, Փալտլի, Փալութլը, Փալութլու, Փալուտ, Փալուտլի անվանումները: Արփենի է վերանվանվել 1978 թ-ին:

Գյուղը գտնվում է լեռնահովտում՝ ծովի մակարդակից 1920մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Գյուղի տարածքում կա 19-րդ դարում կառուցված եկեղեցի:

1897 թ-ին գյուղն ունեցել է 598, 1926 թ-ին՝ 479, 1970 թ-ին՝ 404, 1980 թ-ին՝ 369 բնակիչ: Ազգային կազմը մինչև 1926 թ-ը եղել է հայաբնակ, ապա այստեղ բնակություն են հաստատել ռուսներ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 351 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 31%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 17%: Ունի 81 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (394հա), խոտհարքերը (36հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 84 և 1297 հեկտար: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Արփենի
Ինդեքս՝ 2804